

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ դեկտեմբերի 4-ին (նոյեմբեր ամսվա փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 18 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր ութ, աշխատանքի տեղավորման՝ վեց, ռմբակոծությունից վնասված գույքի փոխհատուցման երկու, սեփականության իրավունքի վերականգնման, շենքի տանիքի վերանորոգման վերաբերյալ՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմած ութ քաղաքացիների դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են ռմբակոծությունից վնասված գույքի փոխհատուցման, սեփականության իրավունքի վերականգնման, շենքի տանիքի վերանորոգման վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան